

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի անվանում

Մեխանիկ

Աշխատանքի վայր

քաղաք Երևան

Աշխատանքի տեսակը, աշխատաժամանակը

Հիմնական, լրիվ աշխատաժամանակ

Ընկերությունը տրամադրում է

- 25 աշխատանքային օր ամենամյա արձակուրդ
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

«Վեոլիա Ջուր» ընկերությունը Հայաստանում հանդիսանում է խոշոր գործատուներից մեկը, ով ապահովում է կայուն և հեռանկարային աշխատանք

Աշխատանքի նկարագիր

- Վերահսկել և համակարգել մեքենա-մեխանիզմների և սարքավորումների աշխատանքները
- Կազմակերպել սարքավորումների վերանորոգման և պլանային ստուգումների գրաֆիկներով սահմանված ժամկետներով աշխատանքների կատարումը
- Իրականացնել կանխարգելիչ և ընթացիկ վերանորոգումների համար անհրաժեշտ նյութերի, պահեստամասերի, գործիքների պատվերների ժամանակին նախապատրաստումը, անհրաժեշտության դեպքում սարքավորումների, պահեստամասերի տեխնիկական անձնագրերի և մասնագրերի կազմում
- Իրականացնել տեխնիկական վերահսկողություն մեքենա-մեխանիզմների և սարքավորումների վիճակի, աշխատանքային ռեժիմների, անվտանգության տեխնիկայի կանոնների պահանջներին համապատասխան շահագործման պայմանների նկատմամբ, կատարել անհրաժեշտ հրահանգների մշակում ու տեղայնացում
- Հետևել աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի, շրջակա միջավայրի պահպանության կանոնների և նորմերի պահպանումը;
- Կազմակերպել սարքավորումների հաշվառումն ու գույքագրումը, հետևել ոչ պիտանի սարքավորումների դուրս գրման անհրաժեշտ փաստաթղթերի պատրաստման գործընթացին
- Հաշվետվությունների կազմում, վառելիքի և քսայուղերի ծախսի և չափաբաժինների վերահսկում, մեքենա-մեխանիզմների և սարքավորումների վթարված և վնասված պահեստամասերի պատճառների ուսումնասիրություն և համապատասխան միջոցառումների ձեռնարկում և թերությունների ակտերի կազմում
- Կատարել անմիջական ղեկավարի կողմից տրված իր գործառույթների շրջանակներում այլ հանձնարարություններ

Պահանջներ

- Բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն
- Մեքենա-մեխանիզմների վերանորոգման, տեխնիկական սպասարկման, մոնտաժման և փորձարկման աշխատանքներ, ստանդարտներ և հրահանգների իմացություն

- Սարքավորումների տեխնիկական բնութագրեր, առանձնահատկություններ և շահագործման կանոնների իմացություն
- Շահագործման ձեռնարկների, տեխնիկական անձնագրերի և այլ տեխնիկական փաստաթղթերի կազմման կարգ և կանոնների իմացություն
- Համակարգչային գիտելիքների (MS Word, Excel) ծրագրերի իմացություն
- Թիմային աշխատանք
- Պատասխանատվության զգացում
- Հաղորդակցման հմտություններ

Դիմելու կարգ

Թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրությունները/CV hr@vjur.am էլեկտրոնային հասցեին՝ վերնագրի դաշտում պարտադիր նշելով պաշտոնը՝ **Մեխանիկ** կամ զանգահարել **033-144-748** հեռախոսահամարին: Հարցազրույցին մասնակցելու համար կհրավիրվեն միայն նախնական ընտրություն անցած թեկնածուները: